ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

28 հունիսի 2017 թվականի N 82-Ն

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ հոդվածի և 57-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով շահագործման փոփոխված աշխատանքային նախագծի՝ ՀՀ բնապահպանության նախարարության 2017 թվականի մայիսի 4-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 44 և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2017 թվականի մայիսի 2-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության» թիվ 920 փորձաքննությունների դրական եզրակացությունները, «Կողբաքար» ՍՊ ընկերության 2017 թվականի մայիսի 12-ի թիվ 03 դիմումը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <Կողբաքար> ՍՊ ընկերության Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Հարճիս-Պտղավանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրից արդյունահանում կատարելու համար, 2012 թվականի հոկտեմբերի 31-ին վերաձևակերպմամբ տրամադրված թիվ ՇԱԹՎ-29/321 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 50 տարով, սահմանելով մինչև՝ 2067 թվականի դեկտեմբերի 16-ը:

2. *Ընդերքի գործակալության պետին՝*

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Հարճիս-Պտղավանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-321 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր), լեռնահատկացման ԼՎ-321 ակտի փոփոխությունները և ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում փոփոխված պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար.

2) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

3) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ>> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ